ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

15.07. 2011 թ Գ Արգինա

ՀՀ Արմավիրի մարզի Արգինա համայնքի ղեկավարի 2011թ
առաջին կիսամյակի աշխատանքային գործունեության վերաբերյալ

Արմավիրի մարզի Արգինա համայնքում տեղի ունեցավ համայնքի ընդհանուր ժողով: Ժողովին մասնակցում էին ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻՄ հարցերով բաժնի պետ՝ Գոռ Հովհաննիսյանը . ավագանու անդամներ ,համայնքի ներկայացուցիչներ և գյուղապետարանի աշխատակիցներ:

Նախագահությամբ Ռ.Արոյանի
Քարտուղարությամբ Ս.Հարությունյանի

Հարգելի Արգինացիներ, հյուրեր, թույլ տվեք Ձեր ուշադրությունը հրավիրել իմ, համայնքի ավագանու,գյուղապետարանի աշխատակազմի կողմից 2011թ-ի հունվարի 01-ից մինչև հուլիսի 01 - ն ընկած ժամանակահատվածը կատարված աշխատանքների մասին :

Հարգելի ժողովի մասնակիցներ գյուղապետարանը և համայնքի ավագանին իրենց գործունեությունը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել են Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ Օրենքի պահանջներին համապատասխան, վաղօրոք կազմված աշխատանքային ծրագրերի հիման վրա:

Այժմ կատարված աշխատանքների մասին ըստ համապատասխան բնագավառների.

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ավագանին հրավիրել է չորս նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են համայնքին հուզող տարաբնույթ հարցեր, ընդունվել են որոշումներ և հետամուտ եղել դրանց կատարմանը:

Կազմակերպված ձևով կատարվել են համայնքի անասնագլխաքանակի հունվարյան հաշվառման , կատարված ցանքերի հաշվառման ինչպես նաև հողային հաշվեկշռի կազմման աշխատանքները: Նշված աշխատանքների ընթացքում կազմված փաստաթղթերը ներկայացվել են ավագանու նիստերի քննարկմանը և հաստատվել ավագանու կողմից:

Համայնքի ղեկավարի անմիջական նախաձեռնությամբ Հազարամյակի Մարտահրավերներ Հայաստան Հիմնադրամի կողմից այժմ իրականացվում է համայնքի ոռոգման ջրի երկրորդ ջրատարի կապիտալ կառուցման աշխատանքները, որին 15 % համաֆինանսավորմամբ իր մասնակցությունն ունի համայնքը: Աշխատանքներ են տարվել համայնքի ներքին ոռոգման փակ ցանցի վերանորոգման ուղղությամբ, ինչպես նաև անցկացվել է մոտ երկու հարյուր մետր նոր փակ ցանց:

Այժմ աշխատանքներ են տարվում համայնքի դաշտամիջյան ճանապարհների կապիտալ վերանորոգման աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ:

« Շեն» ԲՀԿ –ն միջոցներով ինչպես նաև համայնքի համաֆինանսավորմամբ համայնքի դպրոցին հարող տարածքում կկառուցվի ֆուտբոլի խաղահրապարակ, որի աշխատանքները հուսով եմ կսկսվեն մոտ ժամանակներս և կավարտվի մինչև տարեվերջ:

Հաշվետու ժամանակում համայնքի բյուջեի կատարողականը կազմում է հետևյալը՝

Հողի հարկ հավաքագրվել է 1835.9 հազար դրամ
Վարձակալական հողի հարկ հավաքագրվել է 380.0 հազար դրամ
Գույքահարկ հավաքագրվել է 44.4 հազար դրամ
Աշխատակազմի կողմից տարվել են հետևյալ աշխատանքները՝
Կազմվել և տարբեր կազմակերպություններին են ուղարկվել շուրջ 75 տարբեր գրություններ, հաշվետվություններ, կազմակերպվել են համայնքի քաղաքացիների ընդունելությունները, ընդունվել դիմումներ և տրվել դրանց պատասխանները:
Համայնքի խնդիրներն են՝
Համայնքը չունի մշակույթի տուն, գյուղապետարանի շենք, հիմնական խնդիր է մնում գազաֆիկացումը, փողոցները գտնվում են անբարեկարգ վիճակում:
Գյուղատնտեսությանը մեծ վնաս են հասցնում հաճախակի կարկտահարությունները:
Չնայած ոռոգման ցանցի վրա կատարված վերանորոգման աշխատանքներին, դեռևս կան բազմաթիվ չլուծված խնդիրներ՝ կապված ցանցի վիճակի հետ:
Համայնքից մեծ թիվ են կազմում արտագնա աշխատանքի մեկնողները:

Արգինա համայնքի ղեկավար՝ Ռ.Արոյան